ԿԱՐԾԻՔ

Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Սոնա Քաջիկի Գրիգորյանի՝ «Առևտրային բանկերի գործունեության արդյունավետության գնահատման հիմնահարցերը» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Առևտրային բանկերն առանձնահատուկ տեղ են զբաղեցնում ֆինանսա-տնտեսական համակարգում: Դրանք՝ ֆինանսական համակարգում իրենց ունեցած միջնորդի դերակատարությամբ, նպաստում են իրական հատվածի զարգացմանը, միևնույն ժամանակ հանդիսանալով երկրի ֆինանսական ու մակրոտնտեսական կայունության կարևորագույն գործոններից մեկը:

ՀՀ բանկային համակարգը տնտեսության դինամիկ ոլորտներից է, որը մշտապես զարգանում ու կատարելագործվում է: Ֆինանսական շուկաների գլոբալացումը, միջբանկային մրցակցության աճը, նորարարական տեխնոլոգիաների ներդրումը բանկային գործընթացների ու դրանց կառավարման համակարգում, ինչպես նաև Կենտրոնական բանկի քաղաքականությունը՝ բանկային համակարգի բարելավման ուղղությամբ, պայմանավորում են առևտրային բանկերի գործունեության կազմակերպման և դրա արդյունավետության գնահատման մոտեցումների մշակման ու կատարելագործման խնդիրների արդիականությունը:

Միջազգային պրակտիկայում առևտրային բանկերի արդյունավետության գնահատման մոտեցումները կարելի է դասակարգել մի քանի խմբերի մեջ՝ վարկանիշային, արդյունավետության եզրագծի որոշման վրա հիմնված՝ պարամետրական և ոչ-պարամետրական, ցուցանիշների բալանսավորված համակարգերի մեթոդներ և այլն: Ներկայումս զարգացում են ապրում առևտրային բանկերի արդյունավետության գնահատման համար կիրառվող էկոնոմետրիկ մեթոդները: Հայաստանում որոշ հեղինակների կողմից կիրառվել են ցուցանիշների բալանսավորված համակարգերի և արդյունավետության եզրագծի որոշման վրա հիմնված ոչ-պարամետրական մեթոդներ: Սակայն, նշված մեթոդների գերակշիռ մեծամասնությունը հնարավորություն չի տալիս բանկի արդյունավետության գնահատման գործընթացում հաշվառել անորոշության գործոնը, կամ պատահական գործոնների ազդեցությունը, ինչն առանձնապես կարևորվում է ժամանակակից ֆինանսական շուկաների արագ զարգացման և անընդհատ փոփոխությունների պայմաններում:

Նշված հիմնահարցերի լուծման համար պահանջվում է գիտական հիմնավորվածություն ունեցող մեխանիզմների ու մեթոդների մշակում: Սրանով է պայմանավորված քննարկվող ատենախոսության թեմայի արդիականությունը, որի հիմնական նպատակն ու խնդիրները բերված են ստորև:

Հետազոտության նպատակը և խնդիրները

Ատենախոսության նպատակն է առևտրային բանկի ֆինանսական գործունեության առանձնահատկությունների ուսումնասիրության հիման վրա բանկերի արդյունավետության գնահատման և բարելավման գործոնների բացահայտումը, ինչպես նաև բանկերի արդյունավետության գնահատման նոր մեթոդների առաջարկումը:

Ներկայացված նպատակի իրագործման համար ատենախոսությունում դրվել և լուծվել են հետևյալ հիմնական խնդիրները.

- ուսումնասիրել և նկարագրել առևտրային բանկի գործունեությունը բնութագրող հիմնական գործոնները,
- հիմնվելով նկարագրական վիճակագրության ուսումնասիրության վրա՝ որոշել առևտրային բանկի ֆինանսական որոշիչ գործոնների կառուցվածքը,
- բազմագործոն էկոնոմետրիկ մոդելների կիրառմամբ բացահայտել ֆինանսական գործոնների միջև կապերը,
- բացահայտել բանկի ֆինանսական ցուցանիշների անորոշության բնույթը և հիմք ընդունելով բանկերի կատարողականի չափը՝ առաջարկել դրանց դասակարգման մոտեցումները,
- բացահայտել առևտրային բանկի արդյունավետությունը որոշող գործոնների միջև փոխկապակցվածության աստիճանը,
- հիմնվելով բազմագործոն էկոնոմետրիկ մոդելների ուսումնասիրության վրա՝ գնահատել բանկի ակտիվների շահութաբերությունը,
- առաջարկել անորոշության պայմաններում առևտրային բանկը բնութագրող գործոնների վերլուծության մեթոդներ՝ հիմնված անորոշ բազմությունների տեսության վրա:

Ատենախոսության կառուցվածքը և բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացություններից և օգտագործված գրականության ցանկից:

Ներածությունում ատենախոսը՝

- հիմնավորել է ատենախոսության թեմայի արդիականությունը,
- սահմանել է ատենախոսության նպատակը, ուսումնասիրության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսական, մեթոդական և տեղեկատվական հիմքերը,

գիտական նորույթը և ստացված հիմնական արդյունքները, ինչպես նաև ատենախոսության արդյունքների գիտական և գործնական նշանակությունը:

Ատենախոսության առաջին գլխում («Բանկերի արդյունավետության բարձրացման տեսական և մեթոդական հիմքերը») ատենախոսը՝

- ներկայացրել է առևտրային բանկերի արդյունավետության գնահատման մեթոդների միջազգային և տեղական փորձը,
- վերլուծել և ամփոփել է առևտրային բանկերի արդյունավետությունը բնութագրող գործոնների վերաբերյալ առանձին հեղինակների մոտեցումները և բանկերի արդյունավետությունը բնութագրող հիմնական ցուցանիշները,
- վերլուծել և ամփոփել է բանկային գործունեության արդյունավետության գնահատման համար տնտեսական անորոշության գործոնի հաշվառման վերաբերյալ առանձին հեղինակների մոտեցումները,
- ամփոփել է ՀՀ ֆինանսական համակարգի ուսումնասիրությանը նվիրված հայկական հեղինակների հետազոտությունները:

Աշխատանքի երկրորդ գլխում («Առևտրային բանկի արդյունավետության տնտեսա-մաթեմատիկական մոդելավորումը՝ հիմնված գործոնների գնահատման վրա») ատենախոսը՝

- ուսումնասիրել և ներկայացրել է բանկերի արդյունավետության գնահատման համար օգտագործվող էկոնոմետրիկ մոդելավորման մեթոդների միջազգայնորեն ընդունված փորձը,
- ներկայացրել է առևտրային բանկերի արդյունավետության քանակական գնահատման և համեմատական վերլուծության մոտեցումները՝ օգտագործելով ոչ հստակ բազմությունների տեսության մեթոդները:

Ատենախոսության երրորդ գլխում («Հայաստանի բանկերի արդյունավետության չափում եվ գնահատում») հեղինակը՝

- մշակվել է առևտրային բանկի արդյունավետության գնահատման համար որոշիչ գործոնների համակարգ,
- դրա հիման վրա գնահատել է ՀՀ առևտրային բանկերի արդյունավետությունը բնութագրող դինամիկ էկոնոմետրիկ մոդելներ՝ հիմնվելով մոդելավորման ուսումնասիրված միջազգային փորձի և երկրորդային պանելային տվյալների վրա, նախապես վիճակագրական վերլուծության ենթարկելով այդ տվյալները,
- իրականացրել է ՀՀ առևտրային բանկերի արդյունավետության գործոնների որոշ զույգերի ժամանակային շարքերի խաչաձև սպեկտրալ վերլուծություն և գնահատել դրանց կոհերենտությունը,
- իրականացրել է ՀՀ առևտրային բանկերի գործունեության արդյունավետության համեմատական վերլուծություն՝ հիմնված ոչ հստակ բազմությունների տեսության վրա:

Աշխատանքի հիմնական արդյունքների և եզրակացությունների գիտական նորույթը և գիտագործնական նշանակությունը

Ատենախոսությունում ներկայացված ուսումնասիրությունների և վերլուծությունների ընթացքում ստացվել են մի շարք արդյունքներ, որոնցից, որպես գիտական նորույթ, կարելի է առանձնացնել հետևյալները՝

- Մշակվել է առևտրային բանկի արդյունավետության գնահատման համար որոշիչ գործոնների համակարգ, որի հիման վրա գնահատվել են առևտրային բանկի արդյունավետության մոդելներ,
- Կառուցվել են առևտրային բանկի բազմագործոն էկոնոմետրիկ վերլուծության տնտեսամաթեմատիկական մոդելներ՝ հիմնված այդ որոշիչ գործոնների վրա,
- Մշակվել են անորոշության պայմաններում առևտրային բանկերի արդյունավետության քանակական գնահատման և համեմատական վերլուծության մոտեցումներ՝ օգտագործելով ոչ հստակ բազմությունների տեսության մեթոդները:

Ատենախոսության արդյունքները կարող են կիրառվել ՀՀ առևտրային բանկերում, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից՝ ոլորտի ռազմավարական կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով: Աշխատանքում ներկայացված մեթոդները կարող են օգտագործվել բանկերի ռազմավարության մշակման, ցուցանիշների վարքագծի վերլուծության և կանխատեսման նպատակով:

Որոշ դիտողություններ ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսությունը զերծ չէ թերություններից, որոնցից իմ կողմից կարևորվում են հետևյալները՝

1. Աշխատանքի առաջին գլխում հեղինակը վերլուծել ու ներկայացրել է միջազգային և ազգային պրակտիկայում օգտագործվող՝ առևտրային բանկերի արդյունավետության գնահատման տարբեր մոտեցումները: Աշխատանքը կշահեր, եթե այս գլխում հեղինակը նաև որպես ամփոփում հստակորեն դասակարգեր կամ խմբավորեր այդ մոտեցումները, նշելով յուրաքանչյուր մոտեցման թեր և դեմ կողմերը և հիմնավորեր իր կողմից կիրառված մոտեցումների առավելությունները:
2. Աշխատանքի առաջին գլուխը պարունակում է պարագրաֆ՝ «1.4. Հայաստանի ֆինանսական համակարգի ուսումնասիրությանը նվիրված աշխատություններ և հետազոտություններ», որը աշխատանքի բովանդակության ցանկում չի երևում:

3. Առաջին գլխի վերը նշված կետում ատենախոսը սահմանափակվել է առանձին հեղինակների ուսումնասիրությունների պասիվ մեջբերմամբ և վերլուծությամբ: Անշուշտ ատենախոսությունն ավելի արժեքավոր կլիներ, եթե հեղինակը ի՛ր վերլուծությունը ներկայացներ ՀՀ ֆինանսական համակարգի վերաբերյալ: Իսկ ՀՀ բանկային համակարգի գործունեության վերլուծությունն ամբողջական կլիներ, եթե հեղինակը նաև վերլուծեր ՀՀ առևտրային բանկերի արդյունավետությունը բնութագրող ցուցանիշների և բանկերի գործունեության ամփոփ, ընդհանուր շարժընթացը և միտումները, որոնց մասին տեղեկատվությունը և վերլուծությունները մասնավորապես տարեկան կտրվածքով հրապարակվում են ՀՀ ԿԲ կողմից՝ «Ֆինանսական համակարգի կայունություն» հրապարակումներում:

4. Աշխատանքի երրորդ գլխում հեղինակը ներկայացրել է իր կողմից ՀՀ 17 առևտրային բանկերին վերաբերող տեղեկատվության նկարագրական վիճակագրությունների, կոռելյացիոն և կովարիացիոն մատրիցների, վարկածների ստուգման, գնահատված էկոնոմետրիկ մոդելների ելքային աղյուսակներն ու գծապատկերները, որոնք ընդլայնում և ծանրացնում են շարադրանքը: Աշխատանքը կշահեր, եթե դրանք տեղադրվեին հղվող հավելվածներում, հիմնական տեքստում թողնելով այդ վերլուծությունների հիմնական արդյունքները և մեկնաբանությունները:

5. Մոդելավորման նպատակով օգտագործված ժամանակային շարքերը սահմանափակվում են 2019թ.-ով, նկատի ունենալով 2020թ.-ի պանդեմիայի և պատերազմի հետ կապված շոկերի ազդեցությունները: Սակայն, աշխատանքը կշահեր, եթե հեղինակը նաև անդրադառնար հենց այդ շոկերի ազդեցության գնահատականներին:

Եզրակացություն

Վերը նշված դիտողությունները կարող են ներառվել ատենախոսի հետագա հետազոտություններում և չեն նսեմացնում հետազոտության արդյունքները: **Սոնա Քաջիկի Գրիգորյանի** ատենախոսությունն իրենից ներկայացնում է ինքնուրույն հետազոտություն, որն ունի գիտագործնական նշանակություն: Ընդհանուր առմամբ, ատենախոսությունը գրված է գիտական պատշաճ մակարդակով, հեղինակի տեսական և գործնական ուսումնասիրություններն արդիական են: Աշխատանքում էկոնոմետրիկ մոդելավորման տեխնիկաները կիրառված են պատշաճ մակարդակով և մանրամասնորեն ներկայացված են, դրանց հիման վրա արված են իրատեսական եզրակացություններ:

Ատենախոսության հիմնական արդյունքները հրապարակված են: Ատենախոսության սեղմագիրը համապատասխանում է ուսումնասիրության բովանդակությանը և արտացոլում աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները:

Սոնա Քաջիկի Գրիգորյանի՝ «Առևտրային բանկերի գործունեության արդյունավետության գնահատման հիմնահարցերը» թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.08 «Տնտեսության մաթեմատիկական մոդելավորում» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս
տնտեսագիտության թեկնածու, դոցենտ՝ **Ն.Մ. ՋՐԲԱՇՅԱՆ**

Ն. Մ. Ջրբաշյանի
Ստորագրությունը հաստատում եմ՝
ԵՊՀ գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու՝ Մ.Վ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

28.12.2023թ.